ՆՈՐ-ԴԱՐ

№ 43. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Երեքշաբթի 13 Մարտի **1884** Երեքշաբթի 13 Մարտի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 43.

Տարեկան՝ 10 ռուբլի. վեց ամսով՝ 6 ռուբլի. երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
Հասցէ՝ 5 կոպեկի
Բաժանորդ գրվամ՝ն Թիֆլիսում՝ վճարայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութեան վճարը բառին 2 կ. երեքամիսեայ համար՝ կրկնապատիկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ.—Օրուայ խնդիրը և մի ուրիշ նշանաւոր խնդիր։—Ք ր ո ն ի կ ո ն.—Գ. Սաթօսեանցի մահը.—Եղանակը Թիֆլիսում.—Հաւատաւորների Ջոյլ. Մի նոր խաչ.—Երկաթուղու նախագծ. Շոգեկառքերը Պետերբուրգ. Քաղաք. Հիւանդ.—„Հիւս. Հեռագ.“ գնդապետը.—Սիմֆիք. Երեկոները։—Բաֆիկի յուբիլեան.—Հայոց Ծխական ուսումնարան. ուսուցչ. զրուցիներ։—Թղթակցութիւններ։—Աչքադաղարտօղիկ.—Մահ-Վարդքլիսայից և Պօլսից։—Քաղաքական.—Լուրեր։—Հեռագրներ։—Աւետարան.—Տեղեկատու։—Յայտարարութիւններ։—Բանասիրական.—Մանկական պարտէզների խնդրի առթիւ։

Թիֆլիս, 12 Մարտի 1884.

ՕՐՈՒԱՅ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՄԻ ՈՒՐԻՇ ՆՇԱՆԱԻՈՐ ԽՆԴԻՐ։

—

—Մեր հայկական կեանքում անտարակոյս օրուան խնդիրը կաթողիկոսական խնդիրն է։ Մի քաղաքական-զրականական ամենօրեայ հայոց թերթ չը պէտք է դադարէ այդ խնդրի մասին իւր խորհրդածութիւններն, իւր դիտողութիւնները անելուց, այդ խնդիրը բազմակողմանի քննութեան տակ ձգելուց, մինչև որ այդ խնդիրը լուծուի, այսինքն մինչև որ կաթողիկոսը ընտրուի և բարձրանայ ս. Էջմիածնի Լուսաւորչից հաստատած ս. Աթոռի վերայ։

Բայց և այնպէս չը պէտք է անուշադիր թողնել և մի կարևոր խնդիրների։

Դժբազդաբար հէնց նրանք, որոնք ամենից աւելի կոչուած են և ձեռնհաս են այս կամ այն կարևոր խնդիրը լուծելու կամ նրա վճռելուն նպաստելու, դրանք ոչինչ չեն անում, դրանք սպասում են—նորընտիր կաթողիկոսին։

Այս կացութիւնից արդէն կարելի է հասկանալ, թէ ինչ վնաս է կրում ազգը... երբ երկար ժամանակ ազգային եկեղեցին առանց պետի է մնում։

Շատ բարձր կանգնած եկեղեցականները զբաղուած են այժմ միմիայն իրենք իրենց կաթողիկոս ընտրել տալու խնդրով, իսկ միւս մահկանացու թեմական առաջնորդներն չ'գիտեն ինչ բան սկսեն և ո՞րտեղից սկսեն, որովհետև նրանց համար կենսական խընդիր է, թէ ո՛վ է կաթողիկոս։

Այդ «ո՛վ է»-ն կարող է դրանց ապագան միանգամից վճռել։

Եթէ բանաստեղծութիւնները չը դրենք և ցնորականից իրական աշխարհը մտնենք, այսօր կը տեսնենք, որ ամենայն հայոց կաթողիկոսը գործում է միմիայն մեր երկրում, և մինչև օրս «հարցաւընդումներով» և «որոշումներով» հարուստ պօլսեցիները այդ մասին մի փոփոխութիւն չեն արել։ Բայց այսօր Պօլսի պատրիարքը, ազգային ժողովը զբաղուած են միմիայն կաթողիկոսի ընտրութեան խնդրով։

Կարծէք թէ Թիւրքիայի հայոց ոտնմանադրութիւնը ոտնակոխ ա-

նելով՝ երբ Ներսէս սրբազանը վերստին պատրիարքութիւնը շարունակելու յանձնառու եղաւ, այդ միայն նրա համար էր, որ կաթողիկոսի ընտրութեան համար կայացած յանձնաժողովներին նախագահէ, կարծէք թէ Թիւրքիայի հայերի համար ուրիշ կարևոր բայց երեսի վերայ թողած խնդիրներ քիչ կան, կարծէք թէ Տաճկա-Հայաստանի համար լուծելու քիչ խնդիրներ կան, որոնք հազար անգամ աւելի նշանաւոր են և անհրաժեշտ տաճկա-հայաստանցիների համար, քան—ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը...

Այսօր մեզանում մեր հոգևոր իշխանութեան առաջ, Ամիրխանեանները հաւատաւորներին յատուկ յանդգնութեամբ կարողանում են ազգով հայ և հաւատով ազգային եկեղեցու աւազանի մէջ մկրտուածին տանելու և թաղելու բողոքականների գերեզմանատանը։

Եւ այդ յանդուգն հաւատաւորներն մինչև անգամ կարիք չեն զգում ամենահասարակ կարգը կատարելու, որ ընդունուած է այդպիսի դէպքերում. յայտնելու հայոց հոգևոր իշխանութեանը, որ այս ինչ հանգուցեալը հաւատը փոխել է և մտել բողոքականների փարախը, ուստի...

Մեզ համար նշանակութիւն չունի, որ մի անպիտան բարքի և վարքի, մի կորած և բարոյապէս էլ, նիւթական առումով էլ սնանկացած մարդ, Ամիրխանեանների ոսկին սիրում է և դրանց մօտենում է։ Մեզ համար սկզբունքն է կարևոր. արդեօք կարելի է անպատիժ, առանց պատշաճաւոր հարցմունքներն անելու և վկայութիւններն ստանալու հային տանել և թաղել բողոքականների գերեզմանատանը. արդեօք կարելի է ընդունել, որ մեր եկեղեցին ծաղրուի օրը ցերեկով և նրա ժողովրդի մէջ հաւատուրացութիւն քարոզուի ամեն տեսակ վատ միջոցներով։

Քանի տարի է Ամիրխանեանցի խնդիրը հրապարակի վերայ է, և այդպէս էլ մնում է։

Ահա կաթողիկոսական խնդրից դուրս՝ բազմաթիւ կարևոր խնդիրներից մէկը, որի վերայ հրաւիրում ենք իրաքանչիւր ճշմարիտ հայի ուշադրութիւնը, որը ընդունակ է ըմբռնելու ազգային եկեղեցու նշանակութիւնը և հաւատաւորների վնասակարութիւնը։

Մենք այդ խնդիրը ձեռքից էլ թոյլ չենք թողնիլ մինչև որ լուծուի։

Հրաւիրում ենք թեմական սրբազան Առաջնորդի ուշադրութիւնը հաւատաւորների այս վերջին քայլադործութեան վերայ, և սպասում ենք որ գործ դնուի այն միջոցները, ինչ որ Հայաստանեայց եկեղեցին կարգադրում է, ինչ որ թոյլ է տալիս անելու պետական օրէնքները։

Մի ժողովուրդ, եթէ իւր ունեցած իրաւունքներից մէկը լռութեամբ ձեռքից թողնի, մի եկեղեցի եթէ իւր օրէնքը խստութեամբ չը պահպանի, շատ չի անցնիլ, ժողովուրդը կը զրկուի բոլորովին իրաւունքից և եկեղեցին կը քանդուի, այլ ևս պահպանելու ոչինչ իրաւունք չ'ունենալով։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Կիւրակի, մարտի 11-ին Ճաշից յետոյ, երբ կառքով վերադառնում էր տուն գէներալ-լեյտենանտ Դ. Ս. Սատօսեանցը, յանկարծակի վախճանուեցաւ կառքի մէջը սրտի պայթումից և նրան նոյն կառքով մեռած տարան տուն։

—

Նշանակները Թիֆլիսում վոխոխական են, և ձմեռը չէ ուզում բաժանուել մեզանից։ Տարաւոխակ հիւանդութիւնները, ինչպէս ծաղիկը շարունակում են անխնայ իրենց հունձքը։ Այս տարի գրեթէ Կովկասում տեղ չէ մնացել, որ ծաղիկը չարաչար գործում չը լինէր։

Այս և այն եւրոպական քաղաքը զանազան հանդէսներ է կատարում. էկզոտական, կոհանոցական և այլն։ Եթէ կամենային կեղտոտութեան և աղտոտութեան հանդէս կատարել, դժուար թէ մի ուրիշ քաղաք կարողանար մրցել Թիֆլիսի հետ։

Մեր քաղաքային վարչութիւնը ունի բան, որով կարող է պարծենալ։

—

և շատ ժողովրդական ուսումնարաններ և մեծ եռանդով գործելով սրանց մէջ, եկաւ այն եզրակացութեան, որ աշակերտները մինչև ուսումնարան մտնելը կրթական տեսակէտից շատ խանգարուած են լինում։ Նա իւր ուշադրութիւնը դարձրեց այս պատճառով երեխայի ամենաքնքոյշ հասակի վերայ և սկսեց դիտել ու զննել մանկան և մօր փոխադարձ յարաբերութիւնները։ Այս հետազօտութիւններով հասաւ նա այն եզրակացութեանը, որ կանանց երեխայ կրթելու բնատուր հակումը աւելի պէտք է զարթեցնել և կատարելագործել, որպէս զի բնական և մայրական կրթութիւնից հեռու մնան կամայական ազդեցութիւնները, որոնք պատահական, անհաստատ և փոխոխական են։ Այն ժամանակ այս մտքերը նոր չէին, որովհետև արդէն Պեստալոցցին, այդ երեխաների ամենամեծ բարեկամը, որի անձնական ազդեցութեան ներքոյ՝ Ֆրէօբէլը ոգևորուեցաւ այդ բարձր գործի համար. ասում եմ՝ Պեստալոցցին ըմբռնելով մօր ազդեցութիւնը մանկան վերայ, դիմում է սրան (մօրը) հասկացնելու, թէ ինչպէս կարևոր է, որ մայրերը իրենք ձեռնարկեն մի գործի, որի չարժողութիւնը նրանց ամենաաւարտ շահը, սեռական օրէնութիւնը և ամենավերջին մըտերմութիւնն է և պէտք է լինի։ Սակայն այստեղ կարևոր էր յիշել թէ ինչ հայեացք ունէին Ֆրէօբէլի այդ ժամանակակից մանկավարժները և նրա նա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՒԱՆՑ ՊԱՐՏԷԶՆԵՐԻ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ

—

(„Նոր-Դար“-ի Լէյպցիգի Թղթակցից)

„Նոր-Դար“-ի առաջին համարներից մինում *) մի ուսուցչական բնկերութեան ժողով նկարագրելիս՝ ես ի միջի այլոց մի քանի խօսքով դուրս էի բերել այդ ժողովի այն օրուայ առարկայ եղած մանկական պարտէզների հարցը։ Ես այնտեղ խոստացել էի մի այլ անգամ գրել, թէ ինչը առիթ տուեց ուսուցչներին այդ ժողովում այն կարծիքը յայտնել, երբ թէ մանկական պարտէզի աշակերտանոցը մանելով ժողովրդական ուսումնարան, աւելի անընդունակ, անհանգիստ և անուշադիր են լինում քան միւսները։

*) Տե՛ս 1884 № 2, բայց եթէ պէտք է տեսնես, ընդհատ չը կարդաս այնտեղ վոխանակ „լաթինական տառերի“ „լաթինական դասեր“, եթէ ոչ՝ դուրս կը գայ, որ այստեղ մանկ. պարտէզները կամենում են լաթինական դասեր տալ։ Իմ յօդուածում մի այլ տեղ վոխանակ որ մեր կեանքը „հաւատաբարէշութեան“ մէջ չէ, դուրս է եկել՝ „հաւատարակերութեան“ մէջ չէ, իսկ յօդուածի սոորագրութեանը նայելով, կարծես նրա առաջին մասը միևնոյն է գրել, երկրորդը միւսը։ Ըր գիտեմ ես էլ իմ անունս մոռացել, թէ սրբագրական սխալ է։

Թէ և ես պէտք է այս անգամ գրչէն օրհոդաց „Կրթութիւն չարունակելու համար ուսումնարանների“ մասին, սակայն մտածելով, որ մանկ. պարտէզների հարցը գուցէ հնմայ աւելի հետաքրքիր է մեր ընթերցողներին, մանաւանդ որ քանի գնում, այնքան բազմանում են մեզանում մանկ. պարտէզները, ես հարկաւոր համարեցի յօդուածներս կարգը նանգստել։

„Մանկական պարտէզները“. բայց ինչու են կրում նրանք այս բանաստեղծական անունը. գուցէ նրա համար, որ մանկիկները երեկոյ ժամանակի մի մասը անց են կացնում պարտիզում բոյսեր,—ծառեր տնկելով, ցանելով և նրանց հոգալով։ Ո՛չ. նոյն իսկ այդ մանուկներն են ներկայանում պարտէզի ծառ ու բոյսը, վարդն ու մանուշակը։ Ինչպէս որ բնութեան մէջ գտանվում են զանազան տեսակ գոյնի և հոտի ծաղիկները, ինչպէս որ օրանցից նրբագեղ չիբը երեկոյ ծաղկելու և ովթիթելու մնջոցն ունի, ինչպէս որ պարտիզպանը պէտք է սրանց գնգուշութեամբ ՝ըննասէր և գգուէ, այնպէս էլ պարտիզպանուհին պէտք է վայելուչ և գգուէ այդ մարդկութեան գեռաբողբոջ ծաղիկներին։ Ինչպէս որ ծաղիկները միաժամանակ չեն զարգանում (ասում է Իլլենգ), այնպէս էլ մանուկների հոգեկան և մարմնական զարգացումը միաժամանակ չէ լինում։ Ինչպէս որ բոյսը հողի մուխի ծոցից (schoos) դէպի լոյսն է դիմում, այնպէս էլ երեխայի հոգին դիմում է անգիտակցութեան խաւարից դէպի գիտակցութիւն. Ինչպէս որ բոյսի սաղմը որոշ պայմանների է կարօտում, որպէս զի նա ծաղկի և պտուղ տայ, այնպէս էլ մանկական հոգին կարօտում է առանձին հոգատարութեան և օգնութեան, որպէս զի մարդկային կեանքի պտուղը բարգաւաճել և հասունանալ կարողանայ։

Մի ուրախալի երևոյթ է, որ և հայ կինը արդէն սկսում է հասկանալ իւր կոչումը, նա ևս ընտրում է այն ասպարէզը, որի համար կոչուած է. նա բաց է անում մարդկութեան կեանքի պատրիկի խորհրդաւոր դռները և ըսկսում է իւր քնքոյշ ձեռքերով մշակել վարդն ու մանուշակը, մխիթարն ու շուշանը։ Այնպէս չէ՞, նա կամենում է ասել...

Մեր բահերն ալ կ'ընեն...

Բայց հայ օրիորդը հասկանում է և այն, որ ինչպէս պարտիզպանը ծանօթ պէտք է լինի բուսական աշխարհին, այնպէս էլ պարտիզպանուհին պէտք է ծանօթ լինի իւր բոյսերի ու ծաղիկների բնութեան հետ, նրանց հոգւոյ և մարմնի էութեան և զարգացման օրէնքների հետ։ Հայ օրիորդը պատասուում է զարհուրելի խաւարի վարագոյրը, որը բաժանել էր նրան կեանքը Եւրոպայից և դալիս է *) գիտութեան պարտէզներից

*) Պարզը է յուսալ, որ Գերմանիան շուտով կը տեսնի և հայ ուսանողուհիներ, ինչպէս հերթին նա տեսել է։ Ես

Ծաղիկնք քաղել, փունջ վինջել,
Քոյր և եղբօր բաժանել։
(Նմնեթ. Գ.—Ֆ.)

Բայց ինչու այդ պարտէզի դռները բանալու իրաւունքը տուած է կնոջը և այստեղ այլ մարդը իրեն թոյլ զգալով, բացարձակապէս չետ է քաշուում այս ստալարիզից. ահա մի հարց, որին պատասխանելու համար մենք պէտք է դիմենք Ֆրէօբէլին, այս պարտէզների հիմնադրին, գաղափարներին։

Իսկ թէ ինչը առիթ տուեց Ֆրէօբէլին մանկական պարտէզներ հիմնելու, ինչ է սրանց նպատակը, այս հարցերին ես ի'նշանակեմ այնքան համառօտ պատասխանել, ինչքան անհրաժեշտ է իմ յօդուածի պլանաւոր միտքը լուսաբանելու համար **)։

Ֆրիդրիխոս Ֆրէօբէլը բանալով չատ

**) Թէև ես դէպք չեմ ունեցել կարդալ Բահմէյերեանցի բրօշիւրը մանկ. պարտէզների մասին, բայց նայելով նրա ծրագրին, պէտք է կարծել, որ նա ամփոփած կը լինի այդ ճանապհը, ուստի կարելի էր խորհուրդ տալ այն ընթերցողներին, որոնք կը կամենային նեղական հարցի հետ աւելի մօտ ծանօթանալ, ձեռք բերել վերոյիշեալ բրօշիւրը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՏՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀՐԱՄ ՊԱՊԱԶՅԱՆԻ.

Ի Ս Կ Ա Յ Ն Ա Ր Ա Ն

Ես որ ստորագրեալս ի սկզբանե իմ մանկութենէ սկսեալ մինչև ցայսօր ամենայն ջանիւ եւ ճիգիւ աշխատեցայ ի վաճառականութեան գործ, եւ ի Տեառնէ ընդունեցայ շնորհս եւ օրհնութիւն, որով ի ներքոյ քանի մի տարեաց ժամանակի ստացայ ինձ ոչ միայն ընդարձակ վաճառական գործ, այլ եւ ի վերայ այնմ ստացայ ինձ ի Պոլիս, Մարսէլիա, Լիվուռնա, Վենետիկ, Վիեննա, Պէռլին, Լոնդոն, Մանչեստր, Լիվերպուլ, Նիւ-Եորք եւ այլ եւ այլ տեղիս մեծ եւ ընդարձակ առեւտրական յարաբերութիւններ, որոնց շնորհիւ ես ոչ միայն ինձ ապահովեցի ամենայն հարստութիւն, այլ եւ ամենայն պատիւ եւ համակրութիւն ի կողմանց ամենայն առեւտրականաց, որոնց հետ ես ունիմ գործակցութիւն։ Ես ոչ միայն ինձ ապահովեցի ամենայն հարստութիւն, այլ եւ ամենայն պատիւ եւ համակրութիւն ի կողմանց ամենայն առեւտրականաց, որոնց հետ ես ունիմ գործակցութիւն։ Ես ոչ միայն ինձ ապահովեցի ամենայն հարստութիւն, այլ եւ ամենայն պատիւ եւ համակրութիւն ի կողմանց ամենայն առեւտրականաց, որոնց հետ ես ունիմ գործակցութիւն։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն)

ԳԼՈՒԽ Ի-ԻՆ.

Ա. Ի. Ս.

Ինչու Տէրտէրոց ուսուցչական դասը մնաց ետին ուրիշ դասերէն, որ ուսանողներ ունէին։ Ինչու ուսանողներ չունէին ուրիշ դասերէն աւելի ուսուցիչներ։ Ինչու ուսուցիչներ չունէին ուրիշ դասերէն աւելի աշակերտներ։ Ինչու ուսուցիչներ չունէին ուրիշ դասերէն աւելի ուսանող

է նորա տեղ, և հանգուցեալ Հայրապետեան յաւակապէս նորա համար եսկիզոտոս ձեռնադրած է. և թէ՝ Թուրքիոյ պատրիարքութիւնն, ըստ որում միանգամայն ամենայն Հայոց Հայրապետութեան միանաւորդութիւնն է, և իւր ներքև ունի ոչ միայն Թուրքիոյ առաջնորդութիւնները, այլև մասնաւոր կաթողիկոսութիւնները, Սիսոյն պարտ էր ըստ հնաւանդ կարգաց և աւանդութեանց վարուիլ նորա հետ, և ոչ թէ երբև պարզ առաջնորդութիւն մը համարել"։

Նուբեան էֆէնտին ատենախօսութիւնը երեք քառորդ տևեց։

Սլաք

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են, որ թիւրքական հասարակաց աշխատութիւնների մինիստրութեանը առաջարկուեցաւ Տրապիզոնից մինչև Էրզրում երկաթուղի շինելու մասին մի օրինագիծ։ Այդ Հանապարհի նպատակն է ամբողջապէս հատաքել իւր ձեռքի մէջ նաև Պարսկաստանի մէջ եղած առևտրականութիւնը, կենդանացնել տեղական արդիւնաբերութիւնները և ապրանքների վաճառումը, իսկ եթէ Ռուսիոյ հետ պատերազմ լինի, կարողանայ շուտով հասցնել Էրզրում պատերազմական ոյժը և պաշարը։ Սակայն Թիւրքական լրագիրները այս օրինագիծը իրագործուելուն այնքան էլ հաւատ չեն ընծայում։

—

Սուլթանի հրամանով, ներկայումս Կ. Պօլսում պատրաստութիւնները են տեսնում հանդիսաւոր կերպով ընդունելու ւստրիական Թագաժառանգին և նրա կողակցին, որոնք մայրաքաղաքի վրայով պիտի անցնեն և գնան Բուսպաղէմ, Զատկի տօնին ներկայ լինելու։

—

Փարիզից հեռագրում են „Daily News“ լրագրին, Թէ իշխան Բիսմարկը, զգալով որ իւր առողջութիւնը հետզհետէ խանգարւում է և կամենալով ամրացնել Գերմանիոյ միութեան հիմքը՝ վճռեց հաշտանալութեան գաշնի կապել Ռուսիայի հետ, և նիհան ունենալով, որ այդպիսի մի հզօր դրացի կայսերութեան բարեկամութիւնը շատ կարևոր է, Գերմանիոյ ազգասէր ազատվեցնելու համար։ Բացի դրանից, լրագրի ասելութեամբ, կանցլերը կամենում է, որ Ռուսիան համաձայնի տալ իւրաւունք Աւստրիայի ձգտումներին ազատ գործելու Բալկանեան Թերակղզու վրայ և ընդարձակելու նրա մէջ իւր կալուածքները։ Միայն Թէ, ընդհակ առում է լրագրի Թղթակիցը, այդ երկու պետութիւնների մէջ պաշտօնական դաշնակցութիւն չը կայ։

—

Հնդկա-սալտական „Շեմս“ լրագրի ասելութեամբ, Աֆղանի էմիր Աբդուրահման-խանը վճռեց ամրացնել Բալխ, Կաբուլ և Ղանդահար քաղաքները եւրոպական ամրութիւնների ձեւով։ Իսկ Հերատ քաղաքի ամրութիւնները պիտի սաստկացնեն, Աֆղանիստանը ապահովացնելու համար, Հնդկաստանի և Հարաւ-արևելեան կողմերի ամեն տեսակ յարձակումներից։

—

Լօնդոնի լրագրները հաղորդում են, որ յամառային տէրութիւնների Անգլիայի հետ ունեցած բանակցութիւնները, վերաբերեալ զինամիջոց շնորհելի դէմ մնասին գործելուն, արդէն վերջացած են։ Նրանց ասելութեամբ, այդ բոլոր երեքի պետութիւնները համաձայն են հսկողութիւն գործ դնել այն ամեն կապիտալների վրայ, որոնք պարտական են այդ վնասատու արհեստով։ Դրամագլուխները և հաղորդակցութիւնները տէրութիւնները ձեռ առնելու են պետական տնտեսութեան համար։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

9 Մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մարտի 15-ին կարգադրուած է պարապարտյանել մանել գրասոնները երամով հետևեալ երկաթուղիներին. Բրեստ-Բօլօգօվ, Մոսկուա-Նիժեգօրոդի, Պետերբուրգ-Վարշավա-Օրլով-Գրյազ-Մօրշանսկ-Սիզրանի, Տամբօվա-Սարատովի և Կուրսկ-Խարկով Ազամաս։ Իսկ անասնաբուժական դիտողութիւնները սահմանել բացի ներկայումս եղած կենդրոններից նաև Օրենբուրգի, Սամարի, Սարատովի, Օրլովի, Պերմի և մասամբ Պենզենի գծերի վերայ։

Երէկ վախճանուեցաւ, 91 տարեկան հասակում պալատի նախկին մինիստր, կոմս Վլադիմիր Ֆեօդօրովիչ Ադլերբերգը։

ՕԴԵՍՍԱ. Այստեղ ժամանեցին Ռուսիայում էլեվատօրներ շինելու ընկերութեան ներկայացուցիչները։ Ինչպես լսում է էլեվատօրները պատրաստել են տուել Անգլիացիները։

ԼՕՆԴՕՆ. Պատգամաւորների ժողովում կարդացուեցաւ Դրահամի հեռագիրը, որով նա հերքում է այն լուրը, որ իբր Թէ անգլիացիները անգթութեամբ են վարվում վիրաւորուած թշնամիների հետ։ Հեռագրում ասուած է, որ արաբները ոչ խնդրում էին և ոչ էլ խնայողութիւն էին անում, ուստի սպանում էին նրանց։ Այժմ երեք չէխեր հնազանդութիւն ցոյց տուին, ենթադրում են, որ նրանց օրինակին կը հետևեն և ուրիշները։ Կայիրոյի և Խարտումի մէջ հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատուած է։ Բերբերում անհանգստութիւն է տիրում։

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ. Պետական խորհուրդը վճռեց Ֆօգտին էլ արձակել պաշտօնից։

ՀՈՄ. Ենթադրում են, որ Թագաւորը յանձնել է կազմելու նոր մինիստրութիւն դարձեալ Դեպրետիսին կամ Մանչինիին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր Մոսկուա-Պետերբուրգի առևտրական բանկը բացեց իւր գործողութիւնները։

ԱՍՏՐԱԽԱՆ. Քաղաքի դէմ, տասը վերստ բարձր, Վօլգան մաքրուեցաւ սառոյցից. նաւագնացութեան բացուելուն սպասում են մեծ շաբթին։

ՍԱՄԱՐԱ. Նահանգական զեմստվոյի անակնկալ ժողովը, որը բացուեցաւ մարտի 7-ին, վճռեց խնդրել կառավարութիւնից իրաւունք տալ ստորագրութիւն բանալ ամբողջ կայսերութեան մէջ յօգուտ Կազանի նահանգի սովեալց։

Այսօր վճռեցին խնդրել հեռագրով ներքին գործերի մինիստրից որ նա միջնորդէ Նորին Կայսերական մեծութեանը իրաւունք տալ տօնելու Սիբիրի երկաթուղու գիծը Կազանի և Նիժնի-Նովգորոդի վերայով։

ՍԱԼՕՄԻՆ. Նորոգուեցաւ Վիլնա-Բօլնօ երկաթուղու շինութիւնը։

ԲԵՐԼԻՆ. Բէյխստագը կոմմիսիային մի օրինագիծ ուղարկեց օդնականների գործողութիւնների վերաբերեալ օրէնքի ժամանակամիջոցը երկարացնելուն։ Վիճաբանութիւնների ժամանակ՝ Բիսմարկը, պատասխանելով օրինագծին հակառակող լեհացի Եարզեվսկուն, ասաց. Լեհական նախկին նահանգներում անկարելի է ոչնչացնել սօցեալ — դեմօկրատներին, քանի որ այնտեղ գոյութիւն ունի նրան պաշտպանող վաղուցուայ կուսակցութիւնների բաժանումը։

Դեսպան Օրլովը հանդիսաւոր ընդունելութիւնից յետոյ յանձնեց Կայսեր իւր հաւատարմատիղթերը։

Պետերբուրգի բօրսան.

9 Մարտի

Լօնդօն 24⅛, 24 7/32. Համբուրգ—205¾, 206½. Փարիզ—254, 254½. Պօլուիմպերիալը—8 ր. 24 կ. Սրծաթը—1 ր. 37 կոպեկ։ Պետերբուրգի բանկի 5% ամսեր. 1-ին շրջանի—98¼ ր. 2-րդ 96½ ր. 3-րդ—95½ ր. 4-րդ—95½ ծախ. 5-րդ—95½ բուբլի։ Արևել. փոխառութեան 100 և 1000 ր. 1-ին շրջանի—94 ր. 12 կ. 2-րդ—94 ր. 3-րդ 94 ր. 12 կոպեկ։ Վիճակահան. տարած 5% տոմսեր. 1-ին շրջանի 219½ ր. 2-րդ—209½ բուբլի։ Պետերբուրգի բօրսան ամուր է։

10 մարտի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երէկ երեկոյեան, Վիլհելմ կայսեր ծննդեան պատճառով, գերմանական դեսպանի մօտ մեծ բանուկ կար, որին ներկայ էին 500 հոգի։ Բանտը բարեհաճեցին այցելել բոլոր Մեծ Իշխանները Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան։

Մարտի 13-ին գլխաւոր զինուորական գատարանում նշանակուած է քննելու զինուորական նահանգական դատարանի վճռի դէմ ներկայացրած զօրձող զոհ ախմբի դաշտային ինաեներ Բօսոիկու և նրա ընկերակիցների բողոքագրի քննութեան գործը։

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ. Մինիստր Գօլմբէն էլ պետական խորհրդի վճռով պաշտօնից արձակուեցաւ։

ՓԱՐԻԶ. Կարծում են, որ Ֆրանսիան վարձատրութիւն կպահանջէ Զինաստանից 6 միլիոն ֆ. ստերլինդ, Տոնկինի գործերում կորմնակի մասնակցութիւնների համար։ Ինչպես լսում է, հրամանագրուած է Ծովակալ Կուրբէին տիրել Հայնան կղզին։

ՊԵՇՏ. Լուսանկարչական պատկերի շնորհիւ, այստեղի բանկի կասսիրը ճանաչեց, որ Վիեննայում կալանաւորած անիշխանական Կամմերերը, այն անձն է, որը յափշտակելով Էյզերտի խանութից տակոսաբերը թղթերը, տուել էր նրանց պահելու բանկում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ Այսօր եղաւ Կոմս Ադլերբերգի թաղման հանդէսը։ Հոգեհանգստեան պատարագից յետոյ, Լիտէյնիով տարան դէպի Վօլկով գերեզմանատունը։ Կայսրը և մեծ իշխանները հետևում էին դագաղին ձի հեծած, իսկ Մեծ Իշխանուհիները կառքով։

ՄՕԳԻԼԵՎ-ՊՕՏՕԼՍԿԻ. Վաղը կ'սկսուի նաւագնացութիւնը Դնեպրի վերայ։

ՍԻՄԲԻՐՍԿ. Այսօր Կալուգի գունդը ուղեկցեց գերմանական կայսեր, իրենց շէյնի ծննդեան օրը։ Մաղթանքից յետոյ, ճաշ տուին ստորին սպիճանաւորներին, որի ժամանակ՝ գնդի հրամանատարը առաջարկեց բաժակը թագաւորը կայսեր և Վիլհելմ կայսրների կենացները։ Ստորին սպիճանաւորներին փող բաժանեցին այն դումարի տոկոսից, որը 1873 թ. նուէրել էր գնդին Վիլհելմ կայսրը։

ԲԱԳՈՒ. Նաֆթի արդիւնաբերողների առաջին ժողովը լինելու է Բագու քաղաքում, սեպտեմբեր ամսում։

ԲԵՐԼԻՆ. Այսօր Վիլհելմ կայսեր ծննդեան առթիւ, իշխան Բիսմարկը հանդիսաւոր հացկերոյթ տուեց, որին հրաւիրուած էր իշխան Օրլովը։

ՔՐԻՍՏԻԱՆԻԱ. Պետական խորհուրդը վճռեց արձակել պաշտօնից Դէլդէն մինիստրին։

ԿԱՅԻՐՕ. Խարտումի հարուածին կազմում երեւեցած բնիկների զօրախումբը Թօրգօնը մտադիր է պաշարելու։

ԲԵՐՆ. Գերմանական յայտնի հօրս անիշխանականներին արտաքսեցին Զուիցերիայից։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընթացիկ գներըս Մարտի 12-ին։

ՅՈՐՆ.—Դուռնեայի. պուդը	95—1 ր. 5 կ.	
„ Գանձակի „	80—90 կ.	
„ Շօրագալի „	95—1 ր. 5 կ.	
„ Ղազախի „	65—70 „	
„ Երևանի „	85—90 „	
„ Նուխուց „	— —	
ԱԼԻՒՐ.—Բէյտհօվ (Рейтнеъ)		
քսանի	14 ր. 25—50 „	
„ Կօժոխօվի քսանը	16 „ 50 — 60 կ.	
„ Հաճնիզդանի		
„ № 0 քսանը	12 ր. 50 կ.	
„ 1 „	11 „ 25 „	
„ 2 „	9 ր.	
„ 3 „	7 ր. 75 „	
„ 4 „	6 „	
„ Եղբարց Ահարոնեանների		
„ № 1 քսանը	10 ր.	
„ 2 „	8 ր.	
„ 3 „	7 ր.	
„ Դուռնեայի . պուդը	1 ր. 10 —15 կ.	
„ Գանձակի . . . „	1—1 ր. 5 „	
„ Շօրագալի . . „	1 ր. 10—15 կ.	
„ Խառն տեսակները „	— 85—95 „	
ԳԱՐԻ.—Սպիտակը. . . . „	65—67½ կ.	
„ Սևը . . . . . „	67½—70 „	
Գարեջրի համար . . .	67½—70 „	
ԲՐԻՆՁ. աքսայ . . . . „	2 ր. 60—80 կ.	
Նալբանդ “ . . . . „	1 „ 55—70 „	
„ Խառը տեսակները „	1 „ 45—50 „	
ԱՂ.—Ռուսական	պուդը 65—67½ կ.	
„ Ղուբինի	„ 1 ր. 7½—10 „	
„ Կաղզմանի	„ 72½—75 կ.	
„ Բազուի	„ 27½—30 կ.	
ԻԻՂ.—Օդեսայի	„ 11 ր. 30—35 կ.	
„ Նիժեգորոդսկի „	12 ր 45—50 կ.	
ԶԻԹ.—Շերբաթի սպասուած՝ եթէ լինելը կը վաճառուի 10 ր. 10—20 կ.		
„ պատօրնօշէի (արևածագի) սպաս.		
„ սերմ 4 ր. 40 կ.—50 կ.		
„ հիմպազի 11 կ.—11 ր. 10 կ.		
ՇԱՔԱՐ.—Բօզագի . . . պուդը	7 ր. 40 կ.	
„ Բօզագի ճաշի 7 ր.	30—32½ „	
„ Մանրագլ. 6—8 ֆ. „	7 ր. 90—8 ր.	
„ Կարասաճ . . . . „	8 „ 5—10 կ.	
ՇԱՔԱՐԱՒԱԶ. Օվսայի պուդը	5 ր. 90—95 ր.	
„ Մազսիլի „	— —	
ԿՕՖԻ.—Մօքօ—պուդը.	22 ր.—50 — 23 ր.	
„ Լիօ „ „	14 ր. 50 կ.—15 ր.	
Տրամադրութիւնը շարժուն է։		
ԹԻՑ.—Կ. և Ս. Պօպով եղբարց (К. и С. Бр Поповы).		
„ 1 ր. 40 կոպէկանոց.		
„ 1 „ 60 „		
„ 2 „ — „		
„ 2 „ 20 „		
„ 2 „ 50 „		
500 բուբլոց աւել դրամ. համար պղպ % 10		
10-ոց միջին 500 ր. „ „ „ % 9		
Գաւազդ փաստաթղթերը միևնոյն դրամների համար . . . . . պղպ % 7—8.		
ԹԻՑ.—Պօպով եղբարց. (Бр. Поповы) միևնոյն գնահատեալի համար պղպ % 21—22		
„ К. и С. Պօպովի եաբլկին նամանաչած տեսակի միևնոյն գնահատեալի համար պղպ % 15		
Վերջին երկու տեսակների քաւազդ փաստաթուղթը նշանակած պղպ % 1—2 պահաս։		
ՏԻՄԱԼՈՏ.—Կաշխարհի—Պապիրաս 1-ին և 2-րդ տեսակի համար պղպ % 22—23 կ.		
„ 3 „ „ „ 6½—7 „		
Թամբաքու.—2 բուբլիանոց համար պղպ. % 16½—17		
1 ր. 20 կոպէկանոցի համ. % 15½—16		
80 կոպեկանոցի — „ 8½		
40 „ „ — „ 6½—7		
„ Ամասիի — Պապիրաս 1-ին և 2-րդ տեսակ % 21—22		
„ „ „ 3-րդ տես. % 10½—11		
„ „ Խառը. 2 բուբ. պղպ. % 16		
„ „ „ 1 ր. 20 կոպէկ. % 16		
„ „ „ 80 կոպէկան. % 9—		
„ „ „ 40 կոպէկան. % 9—		
„ Բաղաչեանց—Պապիր. տես 1-ին „ % 25		
„ „ „ 2-րդ „ % 20		
„ „ „ 3-րդ „ % 15		
„ „ Խառը. 1-ին տեսակ % 25		
„ „ „ 2-րդ „ % 20		
„ „ „ 3-րդ „ % 15		
ՊԱՂԼԻՒՂ (շաբ. 8—9 վասկ 2 ր. 25—30		
„ 17—18 „ „ 2 ր. 15—20 կ.		
Կանեփ ալ գնդին 2 ր. 20—25 կ.		
Սօդա (Soude caustique 70-72 %-ոց 3 ր. 15-20 կ.		
ԿԻՆԱՄՕՆ.—(Դարչին) . . . 11 ր. 30—35 կ.		
ՊՂՊՂՆ.—Սինապիօրի . . . սպասուած,		
„ „ միւս տեսակները 16 ր. 90—17 ր.		
ՆԱԻԹ —1ա. զանազան գործածութ. 30—32½ կ.		
„ 2 „ „ „ „ 25 — 28 „		
„ Մերզօվի գործածութիւն „ 55—60 „		
ՄՈՄ.—Կէչաովկինդի . . պ. 12 ր. 85—90 կ.		
„ Օդեսայի . . . . . „ 10 „ 35—40 „		
ՄՈՄ.—Տօլչի գործածութեան. 4-նոյ. 5-նոյ. 6-նոյ. 8-նոյ. . . պուդը 12 ր.		
Փոխոխութիւն առ այժմ չկայ։		
ՍԱՊՕՆ.—Տօլչի գործածութեան։		
„ 1 տեսակը պուդը. . . 5 ր.		
„ 2 „ „ . . . 3 „ 60 „		
„ 3 „ „ . . . 2 „ 80 „		
„ Մարմրօնի „ . . . 4 „		
„ Մանրը, փռնտանոցը և կէս փռնտանոցը 4 „ 50 „		
ՃՐԱԳՈՒՒ.—Զանազ. տես. 3 ր. 60 — 70 կ.		
„ Հայաց . . . . . 5 ր. 40—60 կ.		
Ծախսերը շարժում չեն։		
ԶԱՄԻԶ.—(Սուզա) Պարսկաստանի		
անդուկինը պուդ. 3 ր.—3 ր. 5 կ.		
„ „ քսակինը „ 2 „ 15—20 „		
ՆՈՒՇՆ . . . . . 12 ր. 50—60 կ.		
ԿԱՂԱՒՆ (Թէյել) . . . . . 3 „ 75—80 կ.		
ՕՂԻՆ.—Վաճ. տակառով . . % 7⅜—		
ՍՊԻՐՏ.— „ առանց տակառի. % 8⅜—9 կ.		
ՂԱՐԻՂ Նաֆթայ (Iava) 170 կ. 9 ր. —9 ր. 25 կ.		
„ Մէսսին (Messine) 200-ը 7 ր. 50 կ.—8 ր.		
ԼԻՄՕՆ, 320 հատանոց 9 ր. 50 կ.—10 ր.		
ԲՈՒՄԲԱԿ.—Թուշի-վրաց աշնան կտաւեն . . . . 6 ր. 40—50 կ.		
„ Թուշի-վրաց գարնան կտաւեն . . . . . — — —		
„ Թաւաք. աշնան ոչխարի 4 ր. 4—25 կ.		
„ Թաւաք. գարնան. . . . 6 ր. 6—20 կ.		
„ Գանձակի „ գարնան — —		
„ Ղազախի—սպասուած — —		
„ Շիրու. „ — —		
„ Ղարաբաղի „ — —		
„ Նախիջևան-գարնան — —		
„ „ աշնան — —		
„ Խոյասանի „ — —		
ՄՈՐԹ.—Այծ—(Մազսիլի համար)		
գոյը . . . . . 1 ր. 35—40 կ.		
„ „ (Դաբաղների համար		
մեծ) գոյը . 2 ր. 75—3 ր.		
„ Ոչխարին (Մազս. համ.) պ. 4 ր. 80—85 կ.		
„ „ (Օգնս. համ.) գոյ. 1 „ 70 կ.—75 կ.		
ՏԱԼԻՄԻ ԿԱՇԻՆ. . . . . 7 ր. 90—8 ր.		
ՄԱՐՍԻԼԻ Tampier է (Տանպիեա) կաշին կանեփով . . . 39 ր.—39 ր.—25 կ.		
„ „ Cheysson է (Շէյսոն) կաշին կանեփով . . . 36 ր.—36 ր.—25 կ.		
ԿԱՅԵԿ. Ոչխարհնդան կամ միւս տեսակները . . . . . 18 ր. 18—10 կ.		
ՕՂԻՆԴՐ. (Նշագիը) . . . . . 8 ր. 80 — 90 կ		
ԲԱՄԲԱԿ.—Սրևանի-ամէրիկայի տեսակ . . . . . սպասուած		
„ Սրևանի-Գարագեօղի տեսակ . . . . 5 ր. 60—80 կ.		
ԲՈՒՅԱ.—Նախիջ. սպասուած — —		
„ Իմերէթի. նուագ. պուդ. 27 — 28 ր.		
ԹԻՒ.—Կախէթի. սպասուած — —		
„ Իմերէթի. փաքը քանակը (Թեամը . . . . . 90 —95 ր.		
ԼԱՍ.—Բոլոր տեսակները ևս սպասուած։		
ԸՆԿՈՒՈՂԻ ՈՍՏԱ. (Նապլիս.) պաշարը շատ, գինը սաստիկ ընկած. պահանջ չը կայ։		
ԼՈՒԻՒ ԾԱՂԻԿ.—Զաֆրանոյ Թուլ. Պաշարը շատ—Գինն է 1 ր.—1 ր. 50 կ.		
ՈՍԿԻՆ. Պօլիսկերբաչն . . . . 8 ր. 37—38 կ.		
Տաճկաց լբեան . . . . 9 „ 25—27 կ.		
ԱՐԾԱԹՆ. Բուբլիանոց . . . . 1 „ 40—42½		
20 կոպէկանոց . . —23¼ կ.		
ԹԻՖԼԻՍԻ Ահա սր. բանկի սակցան 255—257 ր.		
„ Քաղաքային „ „ 67—68 „		
„ Ազնուականների Կալուածական բանկի գրաւական տոմսը		
(Закладной листъ) 75— 78 „		
ԳՈՒԲԱՑԻՍԻ. Բանկի նոյն տոմսը 76— 79 „		

Խմբագիրը—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդէն լոյս տեսաւ
ՀԱՅԱՍՏՕՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԳԷՈՐԳ ԱՐՈՎԵԱՆԻ
Գինն է 60 կոպ.

Դրամարկղ գնողներին զիջման կը լինի։ Ծախվում է առ այժմ հրատարակչի մօտ—եղբ. Աբովեանցների թղթավաճառանոցում, սեպհական տանը։

5—2

Дозволено цензурою. Тифлисъ, 12-го Марта 1884 г. Տպարան Ա. Ս. Մխիթարեանի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12